

բականների հեղինակները։ Այս խնդիրները ցայժմ գիտնական հետազոտութեան և քննադատութեան չեին ենթարկուել և այսպիսով բարձր։ Ներսէս վարդապետի աշխատութիւնն առաջին փորձն է։ Մեր շարակնոցն իւր այժմեան ձևով կազմակերպուել է տասերեկերորդի վերջերից մինչև տասնևեօթերորդ դարի սկզբը։ տասերեկերորդ դարի վերջին երրորդից առաջ չեր կարող կազմուած լինել — ըստ հեղինակի —, որովհետեւ պարունակում է Վարդան վարդապետի († 1271 թ.), Յակոբ Կայոցի կաթողիկոսի († 1287 թ.) և Յովհաննէս վարդապետ Երզնկացու (մոտ 1250—1325 թ.) բանաստեղծութիւններն ոչ իբրև յաւելուած, այլ իրենց յարմար տեղի դասաւորութեամբ։ Միւս կողմից էլ Ռուկան վարդապետի 1664 թ. առաջին անգամ հրատարակած շարակնոցն իւր պարունակութեամբ և դասաւորութեամբ ըստ ամենայնի համապատասխանում է այժմ մեր ձեռքն եղած շարակնոցին, ուրեմն այդ հրատարակութիւնից յետոյ ոչ մի փոփոխութեան չէ ենթարկուել։ Հաստատապէս ընդունուած շարականների թիւը 1166 է. իսկ եթէ շատ մասերից բաղկացած օրհնութիւն շարականն իբրև ամբողջութիւն ընդունենք՝ կստանանք 1075 շարական։

Բարձր։ Ներսէս վարդապետի հետազոտութեան մասին այս համառօտ տեղեկութեամբ բաւականանալով՝ քննադատութիւնը թողնում ենք մամնագէտներին։ Յանկալի է, որ այս աշխատութիւնը լոյս տեսնէ նաև հայերէն լեզուով, որպէս զի մեղանում ևս կարողանան օգտուել այդ հետազոտութեան արդիւնքից։

2. ԱՄՊՐԵ. Ցաղեր. Վաղարշապատ 1905. էջ 32.։

Դարձեալ մի նոր բանաստեղծ։ և որովհետեւ ամեն մի բանաստեղծ անպատճառ ինքնուրոյն ու տարօրինակ բան պէտք է ունենայ, մեր նորագոյն բանաստեղծն էլ այն տարօրինակութիւնն ունի, որ չգիտէ՝ թէ արդեօք իւր «աղբէրը» «հայ» է, թէ «անհաւատ» (?) թուրք։

«Ա՛յ աշնան հաւքեր, տարաբաղդ հաւքեր,
«Դալիս էք շարքով երկար, անընդհատ,
«Արդեօք տեսե՞լ էք իմ թշուառ աղբէր,
«Արդեօք հա՞յ է նա, թէ թուրք անհաւատ»։

(էջ 6):

Շարունակ գրւում է՝ թէ բառերը կուտակելով և միանը ման վերջաւորութիւններ յարմարեցնելով գրուածքը բանա-

ստեղծութիւն չի դառնայ, սակայն բանաստեղծի դափնիները շատ գրաւիչ են և մի հասարակ «աշնանը քամին վչում է, տերեները գեղնում, հաւքերը չում են» նախադասութիւնը բանաստեղծն արտալայտում է այսպէս.

«Աշուն է եկել, վչում է քամին,

«Աշուն է եկել, գեղնել են ծառեր,

«Աշուն է եկել, չի ժպտում երկին,

«Աշուն է եկել, զնում են հաւքեր», (էջ 6):

Զանձրալի՛ կրկնութիւններ և հարկաւ հչ մի տպաւութիւն:

«Եւ ես էլ մենակ կարից՝ մեղմագին

«Երգում եմ երգիս կաորը վերջին,

«Ի՞նձ էլ չեն տանջում մտածմանց վշեր,

«Վշատատանց երկիր քեզ բարի զիշեր», (էջ 18):

Խեղճ բանաստեղծ. «մոնածմանց վշերից» աղատուելու միակ միջոցը «բարի զիշեր» ասելն է համարում:

Պ. Ամպրէն եթէ չշտապէր իւր գրածներն ի լոյս հանելու և ժամանակ անցնելուց յետոյ նորից կարգար, հաւատացած եմ, որ այդպիսի անհամ բարի գիշերաներն ինըը կջնջէր, Այս համոզման կդայ իւրաքանչիւր ընթերցող՝ կարդալով նրա «Ամպիկն ու հոդիս» (էջ 9) և «ծաղիկը ունի իւր սիրոյ ընկեր» (էջ 24) սիրուն տողերը:

3. ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ. Ա. Ի. Կրասնիցկի. Արցունի, աղաս թարգմ. օր. Մ. Ս. Պետերովսկ 1905, էջ 76.

«Նուէր մանուկներին» վերնագրով լոյս տեսնող մի շաբք ընտիր մանկական ընթերցանութեան գրքոյկները յայտնի են հասարակութեանը. ամեն ջանք գործ է դրւում հայ մանուկներին ընթերցանութեան լաւ գրքոյկներ մատակարարելու հարար: «Արցունքը» այդ գրքոյկների շարքին է պատկանում և տպագրուած է, ինչպէս և միւս բոլոր գրքոյկները, մաքուր ու վայելուչ արտաքինով: Մի բան միայն չի յաջողւում. «Նուէր մանուկներին» գրքոյկները միշտ վատ են սրբագրուում և լի են լինում տպագրական սխալներով. այն ինչ մանկական ընթերցանութեան գրքերի համար այդ բանը շատ մեծ թերութիւն է: «Արցունք»-ի վերջը մի ամբողջ երես ու կէս «վրիպակներ» են տպուած. այս արդէն խայտառակութիւն է:

«Արցունքի» թարգմանիչ օր. Մ. Ս., որ մի քանի թարգմանութիւններ ունի, այժմ բաւականաշափ հմտութիւն է ձեռք